№ 12 ԹԻՖԼԻՍ ՇԱԲԱԹ ՕՐԱԹԵՐԹ 8 1895 ԱՐՇԱԼՈՒՅՍ ՇԱԲԱԹ ՕՐԱԹԵՐԹ 8 № 12

ՀԱՅԿԱԶՆՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶՆՅԱՆ ԵՂԲԱՐՔՆԵՐՈՒ

«ՀԱՅԿԱԶՆՅԱՆ» ԼՈՒՅՍ Ե ՏԱՐԻՍ ՏԱՒՈՂՈՎ 20 ԱՆԳԼ. ՓՈՒՆԴԻ ՀԱՅ ՕՐԱԹԵՐԹ

Խմբագրատուն եւ տպարան Թիֆլիս, Սիոնի փող. № 6 տան մէջ. Ընդունում է ամէն օր 9 ժամից մինչեւ 5։ Գինը տարեկան 8 ռ. կամ 3 րուբլի։ Վեցամսեայ 5 փ. կամ 2 րուբլի։

Մեր տարեկան բաժանորդները, որոնց գումարը լրացել է, խնդրում ենք նոր տարուայ համար կանխաւ գումարը ուղարկել։ Ովքեր մեզ չեն ուղարկի, նրանց թերթը կդադարեցնենք։

Ստանալ կարելի է Թիֆլիսում՝ Ալեքսանդրեան գրատանը, Ռուսական գրատանը, Ռուսական գրատանը Ռուսական գրատանը, Ռուսական գրատանը Ռուսական գրատանը, Ռուսական գրատանը

ՀՅԱՎԱՆ ՂՎԻՎՂԸ

Ռոմանտիկական պատմվածք

Գ.

Ռոմանտիկական պատմվածքներում հերոսները միշտ ունենում են մի ինչ-որ ուժեղ կիրք, որը ամբողջովին տիրապետում է նրանց հոգուն և մարմնին, ստիպում նրանց անել ամենաանհավանական բաներ, ամենաանհնարին գործեր, ամենաանհեթեթ արարքներ, որոնք սովորական մարդկանց համար անհասկանալի են թվում, բայց որոնք ռոմանտիկական հերոսների համար ամենաբնական բաներն են աշխարհում։

Ռոմանտիկական հերոսների կիրքը միշտ ուղեկցվում է մի ինչ-որ ահռելի, սարսափելի, ոգեղեն ուժով, որը կամ նրանց հոգում է ծնվում, կամ էլ նրանց վրա է իջնում որևէ գերբնական միջոցով։ Այդ ուժը կարող է լինել և՛ բարի, և՛ չար, և՛ սուրբ, և՛ սատանայական, և՛ աստվածային, և՛ դիվային։ Ռոմանտիկական հերոսների կիրքը միշտ ուղեկցվում է մի ինչ-որ ուժով, որը կամ նրանց հոգում է ծնվում, կամ էլ նրանց վրա է իջնում որևէ գերբնական միջոցով։ Այդ ուժը կարող է լինել և՛ բարի, և՛ չար, և՛ սուրբ, և՛ սատանայական, և՛ դիվային։

ծանուցած է թէ Վեհ. Սուլթանին ծննդեան տարեդարձին օրը Աղթամարի վանքին մէջ անձամբ Հանդիսաւոր բարեմաղթութիւնները ըրած է արդարասէր և հպատակասէր Օգոստափառ Վեհապետին»:

—

Սալմաստից ստացանք մի երգիծական նկար որի բովանդակութիւնը հետևեալն է: Կրթական տեսուչը հեծել է մի Սալմաստեցու վրայ, որ ներկայացնում է ժողովուրդը, սանձ է ձգել նրա արիւնատ բերանին և քշում է նրան. սակայն քիչ է մնում ցած ընկնի, ուստի և իրենից քիչ հեռու կանգնած առաջ. փոխանորդին գոռում է—«Ամէն, հայր սուրբ, կինամ...» վարդապետը, մի ձեռքը իր ատրճանակի վրայ, ձայնում է տեսչին «սանձէն մի թող, սանձէն մի թող»... Պատկերը շատ լաւ է նկարւած. երևում է որ հրատարակութիւն է, որովհետև պօլիգրաֆով է տպւած:

—

Դավրէժից մեզ գրում են, որ «Սէր» ընկերութիւնը (մինչէ դեռ գոյութիւն ունի նա) ձեռնարկում է ժողովրդական հրատարակութիւնների: Ծամանակն է. Դավրէժի տպարանը անդուլ փոշակեր եղաւ: Շնորհաւորում ենք այդ ձեռնարկութիւնը, եթէ միայն լաւ խմբագրեն գրքերը և մի կարգ անմիտ ու աննպատակ գրքերի պէս չը գան ժողովրդի ճաշակը և միտքը հալոտահարելու:

—

Նոյն տեղից մի թղթակից գրում է հետևեալը: «Ղալա թաղի կանանց նոր ընկերութեան մէջ պատահել է մի այսպիսի ծիծաղելի դէպք: Մի աղայի կին վարելիս է եղել գանձապահութեան սլաշտօն, բայց երբ նրա ընկերակիցնե-

---

աչխարհներ և արեգակներ, որոնց մօտ մեր արեգակը մի փոշի է և ուրիշ ոչինչ.

—Շատ լաւ ուրեմն, բարձրացիր դրանցից մէկի վրայ, հեգնեցի ես.

—Նրանք էլ ցածր են դեռ.

—Վահ... մինչէ էլ բարձր կայ.

—Ի հարկէ.... քանի բարձրանաս, այնքան դեռ ցածր ես, դեռ էլի կայ բարձրանալու. և այդպէս միշտ դէպի վեր, դէպի վեր...

Նայեցի դէմքին. աչքերը այնպէս երազում էին, բայց և այնպէս ոգեորւած էին ու փայլուն, որ հարկ համարեցի հանդարտեցնել նրան: Ինչ պիտի անէի եթէ կատաղէր. դաշտ տէր, քաղաքիցը հեռու:

—Լաւ, ասեցի ես—թող քո ասածը լինի, գնա միշտ դէպի վեր, դէպի վեր...

—Իսկ դու, հարցրեց նա ինձ դառնալով յանկարծ.

—Ե՛ս, ասեցի վախեցած—չէ եղբայր, իմ տեղս շատ լաւ է. փառք Աստուծոյ, տուն ու տեղ ունիմ, տոկոսով էլ փող տւած բանկում. սամոքսս էլ հիւանդ չէ... դու կուզես գնա. իմ տեղը շատ հանգիստ է.

—Բայց այդպէս ցած... ասեց նա.

—Ով որ ցածր տեղերում կապրի, վարդապետեցի ես—նա ընդ միշտ՝ ընկնելու վտանգից ազատ կը լինի:

Պիտի ասել որ խօսք չը գտաւ պատասխանելու: Ես նկատել եմ որ, երբեմն, երբ այդպիսի կարուկ ֆիլոսոփայութիւններ եմ ասում, յաղթում եմ ինձ հետ վիճողին:

Լռեց և երեսը դարձրեց. միայն թէ քիչ յետոյ լսեցի թէ ինչպէս մռմռում էր.

—Աստւած իմ, Աստւած իմ, ասում էր նա—որքան տխուր է մենակ լինելը... մէկը, մէկը միայն, որ ինձ հասկանար:

Որքան տխուր էր նրա ձայնը. յուզեց ինձ: Խենթերը հէնց այդպէս են. երբ խօսում են, մարդու են յուզում:

Այդպէս զրօսնելով և խօսակցելով մենք անցանք մեր դաշտը և սկսեցինք բարձրանալ մի բլուր: Հայկի տխուր դէմքը քիչ պարզւեց.

—Ա՛հ, բարձրանում ենք, գոչեց նա—չո՛ւտ, շուտ ուրեմն, դէհ, ևկ...

Եւ բռնեց թևիցս.

—Չէ եղբայր, ասացի ես թեև խլելով—հանդարտ գնանք. չե՞ս տեսնում չունչս կտրւում է.

—Ո՛հ. ի՞նչ թոքեր, մռմռաց նա:

Այն բլուրը, որի վրայ բարձրացանք, բաց արաւ մեր առջև մի տեսարան, որին երանի թէ տեսնելու չը տանէի Հայկին: Դժւեց երբ տեսաւ: Ամբողջ մարմնով դողալ սկսեց, որովհետև բլուրից այն կողմը փռւում էր մի դաշտ, որի մի կողմից սկսում էր բարձրանալ լեռնաշղթան: Սկսելով բլուրներից, նա հետզհետէ իր ամենաբարձր գագաթով ամբողն էր գրւում և աբեի ճառագայթներից իր վրայի մշտակայ ձիւնը փողփողեցնում:

—Ա՛հ, բարձր, բարձր... գոչեց յանկարծ և կէս ամիսը մի անգամ: Թէև ֆրան գրած է ազգային գրական և քաղաքական, սակայն հանդէսը գէտ գրական բնաւորութիւն է կրում: Դրա և «Հօրիզոնի» մասին կը խօսենք մի յարմար առիթով: «Ծաղիկի» բաժանորդագինն է տարեկան 40 Ղրուշ. Հասցէն տեսնել Յայտարարութիւնների մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Անգլիայի և Ռուսաստանի հրէաների մէջ լրջութեամբ մտածվում է Երուսաղէմում համալսարան բանալ: Հրէական տիեզերական միութիւնը շատ նէրներ է ստացել այդ նպատակի համար:

—Կանանց Ձէյցարիայի ընկերութիւնը, որի նպատակն է երկու սեռերի մէջ հաւասարութիւն մտցնել, իբր միջոց իր նպատակները տարածելու, սկսել է ներկայացումներ տալ, Բիօրնսոնի և Իբսէնի պիեսաներից սկսելով. Ցիւրիխում, առաջին ներկայացումը մեծ յաջողութիւն ունեցաւ:

—«Daily News» հաղորդում է որ Թէհրանում բացւելիք ռուսաց կառավարչական բանկի ճիւղը կունենայ նաև քաղաքական հանգամանք:

—Գերմանական բէյխստագում առաջարկւած էր մի այլանդակ օրինագիծ, կրօնական կուսակցութեան կողմից: Այդ օրինագծի 130-րդ յօդուածը պահանջում էր որ 600 մարկ և երկու տարւան բանտարկութիւն նշանակւի այն մարդին որ կը համարձակւէր կրօնի, ամուսնութեան և ընտանիքի մասին աննպաստ դիտողութիւններ անել: Այս յօդուածը այնպիսի կատաղի ընդդիմութիւն և ընդհանուր ծիծաղ գտաւ, որ մերժւեց մինչև իսկ քւէարկելու: Ցաւալին՝ այն է միայն, որ յանձնաժողովը մերժել է ոչ թէ մեծամասնութեան ձայնով, այլ զանազան կուսակցութիւնների հակառակութեանը ենթարկւելով. եղել են մինչև իսկ մարդիկ, որոնք կամեցել են քւէարկել պատի անսխալականութիւնը: Այդպիսի ծիծաղելի և միջնադարեան փտած վէճերի և վճիռների ետևից են ընկել կրօնաւորները Գերմանիայումն իսկ. այդ ոչ թէ ցոյց է տալիս որ կրօնաւորութիւնը յաղթում է, այլ որ նա իր օրհասական կռիւն է մղում:

—«Figaro» թերթը մի յայտնի դիպլօմատից կարծիք հարցնելով Ծապոնիայի յաղթութիւնների մասին, ստացել է այսպիսի մի հետաքրքիր պատասխան. Ահա նրա ամփոփումը: «Ռուսաստանը, Անգլիան և նոյն իսկ Ֆրանսիան չեն կամենում որ Ժապոնացին մտնի իրենց սահմանակից երկիր Չինաստանի խորքերը և նրան տակն ու վրայ ունի: Ընդհակառակն Գերմանիան և Միացեալ Նահանգները չեն ծածկում որ Ժապոնի կողմնակից են: Գերմանիայի համար Ժապոնը լինելով Ասիայի ամենահզօր զինւորական տէրութիւնը, նրա հետ հարկաւոր է դաշնակցութիւն կապել, բանակցել և գաղթայլն կամ ուրիշ արտօնութիւններ սպառել նրանից: Միացեալ Նահանգները բոլորովին ոչնչացումն են պահանջում Չինաստանի համար»....

—Ինֆլուէնցիան սաստիկ կոտորածներ է անում ոչ միայն Անգլիա, այլ և Գերմանիա (անցեալ ամիսներում մի քանի օրւայ ընթացքի մէջ բռնւողներ եղել են 60,000) Ձվէյցարիայ, Աւստրիա, որի գրէթէ ճշմարիտ կէսը բռնւել է այդ հիւանդութիւնից: Ռուսաստան հիւանդների թիւը այնքան մէծ է, որ դեղագործները դեղ հասցնել չեն կարողանում. օրինակ Օդէսայում էլ դժրիչ չէ մնացել, միայն հիւանդ կայ: Ինֆլուէնցիան դեռ մինչև այժմ անճանաչ հիւանդութիւն է և լաւ դեղը գրանւած չէ: Սաստիկ վարակիչ բնաւորութիւն ունի:

Բայց նա գնում էր միշտ, առանց իսկ ետ նայելու: Մի անգամ միայն նստեց նա մի ապառաժի վրայ և ցած նայեց ղէպի ինձ: Աբեի մի աղօտ ճառագայթ, մի թխագոյն ամպի պատուածքից անցնելով, ողողումէր նրա դէմքը. աչքեր բոց էին արձակում, այտերը կարմրել էին և մազերը ծածանվում քամուց. նա ձեռքը դէպի վեր՝ ինձ էր ցոյց տալիս սպիտակափառ բարձրութիւնները. կարծես հրաւիրում էր գնալ, հետևել իրեն:

Տեղիցս չը շարժւեցի: Խենթ էի:

Վերջապէս նա վերկացաւ նորից, մի րոպէ ինձ երեսրեց իր երկար ատերն՝ու ծածանուող մազերը, ապա քայլեց առաջ և հետզհետէ հեռանալով՝ անհետացաւ դէպի բարձրաբերձ գագաթները...

Այն օրից ի վեր էլ չը տեսայ ես խենթին: Հաւատում եմ որ նա պիտի քաղցած՝ մեռած լինի իր ձգտած փայլուն բարձրութիւնների վրայ:

Խե՜նթը...

—

Երբ այս պատմութիւնը սողունները կարդացին, գտան որ «խելօքը» իրաւունք ունէը, որ բարձրանալու փափագը կատարելապէս խենթութիւն է, քանի որ գետնի երեսին ու ցած տեղերում ապրելը աւելի հեշտ է՝ և աւելի դիրացնող....

Վ. Փափազեան

ՀԱՅԻ Ա. Գ Ի Ր Ն Ե Ր

Փարիզ։ 10 ապրիլ (Ն. տ.) Ֆրանկիսկան նախագահ Ֆիլիկս Ֆորը եկող շաբաթ գնալու է Հավր. Անգլ. կառավարութիւնը յայտնել է որ մի զրահաւոր ուղարկելու Հավր, նախագահին ցղվելնելու համար։ Ֆրանսական թերթերը բաւականութիւն են յայտնում այդ ցոյցից։

Եօհահամ. 10 ապր. Ծապոնական պատերազմասէր կուսակցութիւնը աշխատում է խոչնդոտներ պատճառել խաղաղութեան գաշինքի լծողութեան դէմ։

Պեկին. 12 ապր. Մանդարինները մի խիստ բողոք են տուել կայսրին, որի մէջ նրանք յայտնում են իրենց դէմ լինելը, որ Պօրտ Արտիւրը և կամ որևիցէ Մանչուրիական նաւահանգիստ յանձնուի Ծապոնիային։

Կ. Պօլիս. 12 ապր. Մինիստրների յանձնաժողովը խորհրդակցում է բարեփոխութիւններ մտցնելու համար Հայաստանի վարչութեան մէջ։

Փարիզ. 12 ապր. Ֆրանսուա տը Լօնքլը «Le Matin» թերթում գրում է որ այն ստորագրութիւնները որ եղել են մի հանրագրի տակ, որը ցանկութիւն էյայտնում Անգլիական ազդեցութեան յարատևութիւնը տեսնել Եգիպտոսում, բռնութեամբ է հաւաքուած։ Լօրդ Կրոմէրը—աւելացնում է նամակը—մի էկսպէդիցիա է կազմում Դոնգօլա և Խարթում գնալու, որպէսզի գործին աւելի խառն կերպարանք տայ և Անգլիայի Եգիպտոսը այժմ պահելու համար մի պատճառ գտնէ։ Նամակը վերջանում է այն խօսքերով որ եգիպտացիք Ֆրանսացւոց են ապաւինում այդ գրութիւնից ազատուելու համար։

Լոնդոն. 12 ապր. Լսւում է որ Ծապոնեան, տեղի տալով ստիպմունքներին, կամենում է ետ կենալ իր մի քանի պահանջներից, կնքելու համար խաղաղութեան գաշինքը։

Պետերբուրգ. 13 Ապր. Կէս պաշտօնական կերպով յայտնվում է որ Ռուսիան սաստիկ կընդիմանայ Ծապոնիային Չինաստանի ցամաքից մի որևիցէ կտոր գրաւելու մէջ. դրա համար էլ նա արեւելքում զօրեղացնում է իր նաւային ոյժը։

Լոնդոն. 14 ապր. Մի մասնաւոր հեռագիրը հաղորդումէ Հերոշիմայից, որ վերջապէս խաղաղութիւնը կնքւել է Չինաստանի և Ծապոնի մէջև որ Ծապոնեան իր պահանջած պատերազմական տուգանքից 100 միլիոն իեն զիջել է և Չինաստանը իր կողմից համաձայնւել է Լիուտանգը թողնել Ծապոնին։

Մատրիտ. 14 ապր. Կուբա կղզուց եկած լուրերը յայտնում են որ մի մեծ ապստամբական զօրեղ ոյժ, Մասէօի առաջնորդութեամբ յաջողւել է կղզին ելնել։ Կառավարութեան խմբերի հետ բաղխումից՝ առաջանում է արիւնահեղ կռիւ, որում ընկնում են շատ նշանաւոր ապստամբներ։

Պետերբուրգ 15 ապր. «Новости» լրագիրը հաղորդում է որ ռուսական Փինանսների մինիստրը նպատրաստվում է վերականգնեցնելու ոսկու ընթացքը։

Եօկահամա. 16 ապր. Խաղաղութեան Լիազօրները վերջնականապէս խորհրդակցութիւն ունեցան Սիմոնոսեկիում։ Չինական դեսպանները պիտրաստում են վերադառնալ իրենց տեղը։ «Փինցօ» թղթակցի ասելով, ծագմնելյան և Չինաստանի մէջ կնքւած խաղաղութեան գաշինքը կնքւել է Հետեւեալ կերպով։ 1) Կորէայի անկախութիւն։ 2) Ծապոնեան կը պահի իր գրաւած կէտերը, նաև չինական Լիդօ գետի արևելեան կողմում եղած նահանգը։ 3) Մշտական կերպով Փորմոզա կղզին մնում է Ծապոնիային։ 4) Չինաստանը վճարելու է Ծապոնիային 400 միլիոն իեն պատերազմական տուգանք. 5) Պաշտպանողական և յարձակողական միութիւն երկու տէրութիւնների մէջ։

Պետերբուրգ 16 ապր։ Բուխարայի էմիրը մի մասնաւոր դեսպանութիւն է ուղարկել այստեղ Պամիրի խնդրի համար։

Հերոշիմա. 16 ապր. Չին Ծապոնական խաղաղութեան գաշինքը երէկ կնքւել է Սիմոնոսեկիում.

Վիէննա 16 ապր. Աւստրիայի հաբսպուրգի կողմերի հասած լուրերը հաղորդում են որ այնտեղ երէկ երկրաշարժը մեծ վնասներ է պատճառել։

Լոնդոն 17 ապր. Ծապոնական մինիստրը այստեղ ասում է որ «Times»-ի հրատարակած պայմանները այդ մասին՝ ճիշտ չեն։ Ն Վսեմութիւնը աւելացնում է մի քանի ուրիշ պայմաններ էլ, որ մոռացել է «Times»-ը յիշել, իսկ թերթի մնացած յայտնածների ճշտութիւն էլ կասկածելի է։

Լոնդոն. 17 ապր. Ոչխարների գործակալութիւնը Թիան-Ձինից հեռագրում է որ կայսերական մի հրաման՝ լիազորութիւն է տալիս փոխարքայ Լիհունգ-Զանգին, ստորագրելու խաղաղութեան գաշինքը և ընդունելու ժապոնական ուլտիմատումով ներկայացրած պայմանները, այսինքն վճարել իբր պատերազմական տուգանք 200 միլիոն տայել. Լաոտինգի Թերակղզին մինչև 40° լայնութիւնը յանձնել Ծապոնին նոյնպէսև Փորմոզան. հինգ նոր նաւահանգիստներ որոնց մէջ և Թիէնձինը բանալ արտաքին վաճառականութեան առաջ. Լիկիկի տուրքը 2% աւելի չի լինի. ժապոնացիք իրաւունք ունենան բամբակի գործարաններ բանալ և խառնւել ուրիշ աշխատութիւնների մէջ Չինաստանում։ Լիհունգ Զանգը վերադառնում է Պեկին։

«ՇԱՒԻՂԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Արդարիւ. Անանիա Դ. Խաչիկեան. Տեղեկացէք փոստից. բոլորն էլ կանոնաւորապէս ուղարկուել են։

Մարաղա. Կարօ. Ձեզ չենք ճանաչում։ Այդպիսի անձերի գովելու համար «Շաւիղին» չը դիմէք այլ ևս։

Մարաղա. Օ-ր. Ձեր վերջին նամակը, դժբաղտաբար, տպագրելու հնարաւորութիւն չունինք։

Ռուսի Թ. Գրիգորէվ. Հոգեհանգիստ կը լինենք ձեր նամակը մեզ տպի ցետագայ համարում։

Շիրաց. Մալաթիա. Յ. Ամիրխանեան. № 8-ում դրած է որ «եկեղեցապատկան անձերն քաղաքացիք են անում և գերանները ծախում» բայց ո՛վ—դա չէ ասւսծած. խոստովանեցէք որ այդ ոտանաւորն էք դուք գրել և «ստոգիկ» ոճ չունի մեզ համար։ Ուրախ կը մնանք ձեզ վրայ առնում ուրեմն, եթէ անտրը դուք չէք։ Այդ դէպքում ձեզ յայտնել հարկաւոր չէ։ Ուղղեցինք. իսկ ձեր երկու անգլերէն և հայերէն ոտանաւորներով նամակները մեր ծիծաղը չարժեցին. առաջինը չէք որ սուիպում էք մեզ ձեր չիմարութիւնները կարդալ։

Սպահան. Բ. Փոխանակ հայհոյելու, հերքեցէք. ոստիկանական միջոցներով մեզ վախեցնել չէք կարող։

Սպահան. Տարպետ Սէթ Նահապետեան. Ձեր արդարացումը շատ ուշացել է. ինչու համար, երբ նայի եպիսկոպոսը ուտել էր և ձեզ ամբաստանել էր իբր գող, լռել էիք։ Չէնց որ գնաց, ձայն էք հանում։ Ձեր պատասխանը առանց այն էլ կարճանած է և բնում և ձեր վարկը վերականգնեցնելու փոստաթը չէ բովանդակում. «Շաւիղի» մէջ ձեզ տեղ չունինք. հետու նրանից։

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

—

Գավրէժ 23 մարտ 95

Յուսալով որ ամեն մի արդարացի բողոք և ինքնապաշտպանութիւն սիրելիր ընդունելութիւն կը գտնէ «Շաւիղում», խնդրում եմ, բարեհաճեցէք տեղ տալ երկտողիս Ձեր թերթի մօտակայ համարներից մէկում։

Ներկայ 1895 թուականի № 3 «Շաւիղում» տպւած (քաղւած մի մասնաւոր նամակից) վերտառութեամբ Թաւրիզի թղթակցութեան և № 8-ում Դ ստորագրութեամբ եղած նամակի հեղինակութիւնը շատերն ինձ են վերագրում. վասն որոյ, զանազան թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար, գալիս եմ ներկայիս յայտարարել, որ վերոյիշեալ նամակները ես չեմ գրել։ Այս առթիւ հարկաւոր եմ համարում նկատել Թաւրիզի այն յարգելի պարոններին որոնք իրենց ոխը կամենում են հանել ինձանից՝ զանազան սուտ լուրեր ու զրպարտութիւններ բարդելով ինձ վրայ որ ամեն մի Դ. ստորագրութեամբ եղած գրութեան հեղինակ ճանաչել Գօլուխանեանց ազգանունով մի անհատի, այդպիսի եզրակացութիւն հանելու ընդունակ են միայն լոգիգայից զուրկ մարդիկ. ինչու, զուք Դ-ի մէջ աշխատում էք գտնել միմիայն Գօլուխանեանց և ոչ Դաւիթ կամ մի այլ անուն, և վերջապէս, ինչու մինչև այսօր չէք ըմբռնել որ Առաքել անունով մէկն էլ կարող է իւր գրութեան տակ Դ. գնել հալածանքից զերծ մնալու համար։

Ղազար Գօլուխանեանց

Պատասխանատու—Հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ARA

A journal of literature and of armenian politics and history

Edited and published by

J. D. MELIK BEGLAR

Subscr. for 12 issues—rupees 3 8

,, ,, 6 ,, ,, 2 8

,, ,, 3 ,, ,, 2 0

Adress: Chogda, Bengal, (India)

1—3

94 թուից Դավրէժում կազմւած է «Ընթերցասիրաց» գրադարանական ընկերութիւն, որի նպատակն է ժողովրդական գրադարաններ բանալ Ատրպատականում։ Ընկերութիւնը սորանով դիմում է յարգելի հեղինակներին, հրատարակիչներին և նւիրատուներին, որ բարեհաճեն յօգուտ ընկերութեան տրուելիք նիւթական և այլ նուէրներն ուղարկել «Շաւիղի» խմբագրութեան։

Դավրէժում մեր հասցէն է՝

Cabinet de lecture populaire

2—2

ՀՕՐԻԶՕՆ

Հրատարակութեամբ Փ. Վարդազարեանի

Լոյս տեսաւ ա. գիրքը և ծախվում է 1 րուբլիով։ Պարսկաստանից կարող են դիմել «Շաւիղի» խմբագրութեան, ուղարկելով 6 դրան։

2—3

Երկու տարի է որ եղբայրս Դաւիթ Շահվերդեան, երբեմն Նազարբեկեան անունով. անհետացել է. խնդրում եմ, եթէ որ և իցէ անձնաւորութիւն իմանում է նրա տեղը, ինձ իմաց տայ «Շաւիղի» միջոցով, մինչ՝ իսկ եթէ մեռած լինի։ Նրա կերպարանքը սա է. 20 տարեկան, սև աչքերով, լիք և կարմիր երեսով. սև մազերով մի երիտասարդ է, ինքն էլ Դաւրիժեցի։ Որով պարտաւորեցած՝ չնորհակալութիւնս կը յայտնեմ «Շաւիղի» միջոցով։

Դիմիարի Շահվերդեան

3—3

ՐԱՖՖԻ

ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ

Գինն է 20 կոպ.

Դիմել Թիֆլիս Կովկասեան գրավաճառանոցին և կամ հեղինակի այրէին Tiflis. Anna Raffi. 3—3